

Գործարար շահերի պաշտպանության ցանցի Կանոնակարգ

Առաքելությունը

«Գործարար Շահերի Պաշտպանության Ցանցը» (այսուհետ՝ Ցանց) կազմակերպությունների միավորում է, որի նպատակն է միացյալ ուժերով նպաստել բարենպաստ գործարար միջավայրի ձևավորմանը երկրի գործարար համայնքի շահերի և իրավունքների պաշտպանության միջոցով:

Ցանցի կարգախոսը

Ցանցի կարգախոսն է՝ *Գործարար հանրության միացյալ ձայնը:*

Ցանցի նպատակները

- Համակարգել Ցանցի անդամների գործունեությունը ի նպաստ երկրում սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման, ՓՄՁ ոլորտի զարգացման և գործարար միջավայրի բարելավման
- Խթանել Ցանցի անդամների և շահագրգիռ այլ հասարակական կառույցների, պետական ու մասնավոր հատվածի ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների միջև հաղորդակցությունը
- Մասնակցել մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված հանրային ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին՝ ներկայացնելով Ցանցի անդամների համաձայնեցված տեսակետը և դիրքորոշումը
- Նպաստել հայկական գործարար համայնքի զարգացմանը՝ հավասար հնարավորությունների և արդար մրցակցային պայմանների ապահովումը խթանելու միջոցով
- Բարձրացնել գործարար հանրության և քաղաքացիական հասարակության իրազեկվածությունը հանրային քաղաքականությունների մշակման և օրենսդրական բարեփոխումների իրականացման վերաբերյալ:

Ցանցի գործունեության ուղղությունները

- Փորձագիտական վերլուծություններ, օրենսդրական նախաձեռնությունների ուսումնասիրություն, պետական քաղաքականության և ծրագրերի իրականացման մշակում և գնահատում
- Մասնավոր ձեռնարկատիրության առկա հիմնախնդիրների և հրատապ հարցերի վերաբերյալ քննարկումների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում
- Շահերի պաշտպանությանն ուղղված քարոզարշավների և այլ միջոցառումների կազմակերպում և իրականացում
- Կառավարական, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ կառավարական և միջազգային կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության նախաձեռնում և իրականացում
- Ցանցի նպատակների և խնդիրների իրականացմանն ուղղված ցանկացած այլ գործունեություն, որը չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

Գործունեության սկզբունքները

- Անդամների հավասարություն
- Համերաշխություն
- Թափանցիկություն
- Փոխհամաձայնություն
- Քաղաքական չեզոքություն
- Արդյունավետություն:

Իրավական կարգավիճակը

Ցանցը իր գործունեությունն իրականացնում է առանց պաշտոնական գրանցման ինչպես Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Ցանցի կառավարումը

Ցանցի գործունեության կառավարման գերագույն մարմինն է Ցանցի անդամների ընդհանուր ժողովը /այսուհետև՝ Ժողով/:

Ժողովի որոշումները ընդունվում են փոխհամաձայնության (կոնսենսուսի) սկզբունքի հիման վրա, իսկ դրա անհնարինության դեպքում ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկությունը իրականացվում է Ցանցի անդամների ներկայությամբ կամ հեռակա՝ էլեկտրոնային եղանակով:

Ցանցի հերթական ժողովները հրավիրվում են Քարտուղարության կողմից (սովորաբար երեք ամիս պարբերականությամբ): Արտահերթ ժողովներ կարող են հրավիրվել ըստ անհրաժեշտության՝ Քարտուղարության, կամ Ցանցի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ:

Ժողովի լիազորությունները

- Հաստատել Ցանցի կանոնակարգը և փոփոխությունները
- Հաստատել Ցանցի ռազմավարությունը
- Հաստատել նոր անդամակցությունը կամ անդամակցության դադարեցումը
- Հաստատել Հանձնաժողովների ստեղծման կամ գործունեության դադարեցման որոշումները
- Հաստատել Ցանցի գործունեության տարեկան հաշվետվությունները
- Ընտրել Ցանցի Քարտուղարություն
- Ընդունել միասնական քաղաքական դիրքորոշման/առաջարկությունների վերաբերյալ որոշումներ

Ցանցի Քարտուղարությունը

Ցանցի Քարտուղարությունը հանդիսանում է Ցանցի գործունեությունը կազմակերպող գործադիր մարմինը: Քարտուղարությունը պետք է իրականացի Ցանցի անդամ կազմակերպություններից մեկի կողմից, որն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամկետով անդամների պարզ մեծամասնության ձայներով: Ցանցի Քարտուղարություն իրականացնող կազմակերպությունը ներկայացնում է նաև Ցանցի գործունեության Համակարգողին:

Ցանցի քարտուղարությունը ունի հետևյալ պարտականությունները՝

- Համակարգում է Ցանցի աշխատանքները և ընթացիկ գործունեությունը, ներառյալ անդամների հետ հաղորդակցությունը տարբեր քաղաքականությունների վերաբերյալ
- Իրականացնում է Ժողովի կողմից ընդունված որոշումները,
- Կազմակերպում է Ցանցի հերթական և արտահերթ ժողովները,
- Աջակցում է գործող հանձնաժողովների աշխատանքներին
- Հաշվետվություններ է ներկայացնում ժողովին Ցանցի գործունեության վերաբերյալ,
- Ընդունում է նոր անդամների անդամագրման վերաբերյալ դիմումները և ներկայացնում Ժողովի քննարկմանը,
- Անհրաժեշտության դեպքում իրականացնում է անդամակցության դադարեցման ընթացակարգը համաձայն սույն Կանոնակարգի,
- Իրականացնում է իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործողություններ և ապահովում հաղորդակցությունը Ցանցի անդամների միջև
- Ցանցի գործունեության շրջանակներում կազմակերպում է աշխատանքային հանդիպումներ և քննարկումներ, սեմինարներ, կոնֆերանսներ և այլ միջոցառումներ
- Պատրաստում և շրջանառում է նիստերի և հանդիպումների արձանագրությունները անդամների միջև
- Իրավասու է տնօրինել և որոշում կայացնել Ցանցի գործունեությանը վերաբերող բոլոր հարցերի շուրջ, բացառությամբ Ժողովի իրավասությանը վերապահված հարցերից:

Անդամակցության կարգը և դադարեցումը

Ցանցին կարող է անդամակցել ցանկացած իրավաբանական անձ, որը ընդունում է Ցանցի գործունեության սույն Կանոնակարգում արտահայտված նպատակները, խնդիրներն ու գործունեության սկզբունքները, ինչպես նաև չի հետապնդում քաղաքական նպատակներ:

Անդամակցության նպատակով թեկնածու կազմակերպությունը գրավոր ձևով ներկայացնում է դիմում (էլեկտրոնային դիմումի դեպքում Ցանցի կայքում տեղադրված էլ. հասցեին), որին կցում է Կանոնադրության պատճենը: Դիմումը ստանալուց հետո Ցանցի քարտուղարությունը ամփոփում է այն և ներկայացնում անդամներին հաջորդող ժողովի ընթացքում քվեարկելու նպատակով: Քվեարկությունը կատարվում է մասնակից անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, որի արդյունքները մեկշաբաթյա ժամկետում ներկայացվում են դիմում ներկայացրած կազմակերպության ներկայացուցչին: Ցանցին անդամակցությունը հաստատվում է Ցանցի Հուշագրի մեջ ստորագրությամբ:

Ցանցի ցանկացած անդամ կարող է դուրս գալ Ցանցից իր նախաձեռնությամբ առանց որևէ խոչընդոտի՝ նախապես գրավոր տեղեկացնելով Ցանցի Քարտուղարությանը այդ մասին:

Ցանցին անդամակցությունը կարող է դադարեցվել Քարտուղարության առաջարկով և Ժողովի հաստատմամբ հետևյալ դեպքերում.

- Անդամի կողմից Ցանցի սույն Կանոնակարգով և Հուշագրով սահմանված նպատակներից և սկզբունքներից շեղվելու դեպքում,
- Առանց Ժողովի կամ Քարտուղարության հետ համաձայնեցնելու՝ Ցանցի անունից իրականացվող ինքնագործունեության դեպքում, որը կարող է կամ հանգեցրել է Ցանցի և նրա անդամների հեղինակագրկմանը և վարկաբեկմանը,
- Ցանցի կողմից իրականացվող աշխատանքներին առանց հիմնավոր պատճառի մեկ տարվա ընթացքում չմասնակցելու դեպքում: Այդ դեպքում Ցանցի Քարտուղարությունը անդամ կազմակերպությանը գրավոր ձևով տեղեկացնում է այդ մասին և 2 շաբաթվա ընթացքում գրավոր պատասխան չստանալու դեպքում անդամակցությունը համարվում է դադարեցված: Պատասխանի ստացման դեպքում Ցանցի անդամը երեք ամսվա ընթացքում պետք է մասնակցություն ցուցաբերի ցանցի աշխատանքներում:

Անդամների իրավունքներն ու պարտավորությունները

Ցանցի անդամները իրավունք ունեն.

- Մասնակցել Ցանցի ժողովին և դրա իրավասությանը վերապահված որոշումների կայացմանը,
- Մասնակցել Ցանցի կողմից նախաձեռնվող կամ իրականացվող միջոցառումներին,
- Հանդես գալ նախաձեռնությամբ կամ առաջարկով՝ ներկայացնելով այն Քարտուղարությանը
- Կարծիք կամ դիրքորոշում արտահայտել քննարկվող հարցերի վերաբերյալ,
- Ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն Ցանցի գործունեության վերաբերյալ,
- Դուրս գալ Ցանցից այդ մասին գրավոր նախապես տեղեկացնելով Քարտուղարությանը,
- Օգտվել Ժողովի որոշմամբ ընձեռնված այլ իրավունքներից:

Ցանցի անդամները պարտավոր են.

- Կանոնավոր կերպով մասնակցել Ցանցի գործունեությանը, ժողովներին և Ցանցի կողմից կազմակերպվող այլ միջոցառումներին (քննարկումներ, սեմինարներ, քարոզարշավներ, կոնֆերանսներ և այլն),
- Աջակցել Ցանցի գործունեությանը,
- Հաշվետու և թափանցիկ լինել իրենց անդամների, գործընկերների և շահառուների առջև՝ Ցանցի կողմից/անունից իրականացվող գործունեության վերաբերյալ:

Հանձնաժողովները

Ցանցը մի շարք ուղղություններով կարող է ստեղծել հանձնաժողովներ՝ կախված վերջինիս ռազմավարական և մարտավարական առաջնահերթություններից:

Հանձնաժողովներում ներգրավվում են անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները՝ հաշվի առնելով վերջիններիս մասնագիտական կարողությունները և հետաքրքրությունները: Հանձնաժողովների ստեղծման և գործունեության դադարեցման որոշումները կայացվում են անդամների կողմից քվեարկության ժամանակ ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Համագործակցությունը այլ կազմակերպությունների և կառույցների հետ

Գործարար շահերի պաշտպանության ցանցը կարող է համագործակցել այլ կազմակերպությունների և կառույցների հետ՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում առկա առաջնահերթությունները, ինչպես նաև համատեղ ուժերով խնդիրների լուծման անհրաժեշտությունը: